ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

19.06.2018թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,
ՀՀ ՀՈՒ ՍՎ ԱԾ շահագործման և պլանավորման բաժնի սպա, մայոր Ս. Ստեփանյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

Բացակայում է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի և «ԿԱՄԱՋ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքների (ապրանքների) ամբողջական նկարագիրը առկա են և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին բավարարող:

«ՍՎա Մոթորս» ՍՊԸ-ի՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքների (ապրանքների) ամբողջական նկարագիրը առկա են, սակայն փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ 4-րդ չափաբաժնում (Բեռնատար մեքենաների պահեստամասեր (Կարբյուրատոր)) ընդգրկված ապրանքատեսակի ծագման երկիրը նշված չէ, ինչը չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը 19.06.2018թ. որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն (ըստ եզրակացության «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 490 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ, իսկ «ԿԱՄԱՋ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն՝ 20 619 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի

2-րդ կետի, համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ):

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 22.06.2018թ., հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի, «ԿԱՄԱՋ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի և «ՍՎա Մոթորս» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո նրանց պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Հ. Կարապետյան
Գնահատող	Ս. Ստեփանյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Կ. Բրուտյան
Գնումները համակարգող՝	Ա. Ամիրյան